




“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԼԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1903

ԹԻԻ 4

ՈՒՆԵՆԱՆ ԵՂԻՐԻ  
 Ոչ միայն Մեթո-  
 տական եկեղեցին, ու-  
 թուն հիմնադիրն ե-  
 ղաւ ճան Ուէսլի, այլ  
 նաև Անգղիական ե-  
 կեղեցին, որուն մէջ  
 մեծցաւ ան, շատ բան  
 կը պարտի անոր:  
 Ճան Ուէսլիի ծննդ-  
 եան 200երորդ տա-  
 րեդարձը կու գայ այս  
 տարուան Յունիսին:  
 Ազգային եկեղեցին  
 գրեթէ ծիսական ե-  
 ղաժ էր և զուրկ հո-  
 գևոր կեանքէ, և  
 թէպէտ Ուէսլիի քա-  
 ռոզութեան կերպը  
 հաճելի չէր անոր  
 եկեղեցականներուն,  
 որուն համար ան  
 ստիպուեցաւ իր հե-  
 տևողներով ուրոյն ե-  
 կեղեցի մը կազմել, և  
 սակայն անհրաժեշտ  
 հետևանքն այն եղաւ  
 որ անոր եռանդուն  
 ոգւոյն ազդեցութիւ-  
 նը աւետարանական  
 վերակենդանութիւն  
 մը յառաջ բերէ Ազ-  
 գային եկեղեցիին  
 մէջ, ինչպէս բերաւ  
 ալ:



մանաքարի մը վրայ  
 կանգնած իբրև իր  
 բեմին վրայ, և ներ-  
 քեզ կայ անոր մէկ  
 ուրիշ խօսքը, «Իս  
 բոլոր աշխարհի վրայ  
 կը նայիմ իբրև իմ  
 թեմիս վրայ»:

Թերևս այս 1903  
 տարիին մէջ ծնած  
 մանկիկներուն մէջ կը  
 գտնուի մէկը, որուն  
 կեանքը աւելի մեծ  
 օրհնութիւն պիտի ըլ-  
 լայ եկեղեցիին, քան  
 զոր եղաւ 1703ին ծը-  
 նած ճան Ուէսլի  
 մանուկին կեանքը:

ԿՏՈՐ ՄԸ ԱՂ

Մարդ մը գեղա-  
 րան մը մտաւ և ըմ-  
 պելի մը ցուցնելով  
 ըսաւ գրագիրին թէ  
 հարկը տողար կու  
 տամ եթէ ցուցուի  
 ինծի թէ ի՛նչ բան  
 իրարմէ կը զատէ իւ-  
 ղը և շուրջ: Գրագի-  
 րը վայրկեան մը ըմ-  
 պելիին վրայ նայելէն  
 ետքը, «Փոխանակա-  
 գիր մը գրեցէք այդ  
 գումարին համար, և  
 անկէ ետքը պիտի ը-  
 սեմ», ըսաւ մար-

Բայց արդեօք ե-  
 կեղեցին որո՞ւ աւելի պարտական է,  
 ճանի՞ թէ անոր Զարլա եղբոր որ հինգ  
 տարիէ աւելի պղտրիկ էր ճանէ, և որ  
 Անգղիերէն լեզուով ամէնէն քաղցր  
 հոգևոր երգերէն շատը շարագրեց:  
 Մենք հոս կը գնենք Ուէսլիի միտքը  
 Արքայաբանին մէջ անոնց համար կանգ-

նուած դամբարանին պատկերը: Մե-  
 տային մէջ վրայի գլուխը ճանին  
 է և ներքեւը քանդակուած է անոր  
 վերջին խօսքը. «Վաւազոյնն այն է որ  
 Աստուած մեզի հետ է» վարը երև-  
 ցած քարոզութեան տեսարանին մէջ  
 ճան Ուէսլի կը ներկայացուի գերեզ-

դուն: Մարդը շուտ մը գրեց փոխա-  
 նակագիրը, և յետոյ զանիկա երիտա-  
 սարդին գրպանը դրաւ: Այնուհետև  
 երիտասարդը ըմպելիին մէջ կտոր մը  
 հասարակ աղ դրաւ, և ահա իւրն ու  
 աղը իրարմէ բաժնուեցան: Կտոր մը  
 հասարակ աղ, այդ էր ամէնը: Գրա-

գիրը առաւ ստակը, և մարդը՝ տե-  
գեկութիւնը, որուն համար վճարած  
էր անոր գինը:

Հիմա, աղջիկներ և տղաք, երբ կը  
լսէք թէ ի՞նչ զարմանալի բան կ'ընէ  
կտոր մը աղը, չէ՞ք ուզեր քանի մը  
փորձեր ալ դուք ընել անձամբ: Թե-  
րևս, աղջիկներ, կը ճանչնաք աղջիկ  
մը, որ ձեր դպրոցը կ'երթայ, և չդներ  
զեղեցիկ գլխարկ, և կամ չհագնիր  
նորաձևութեան համաձայն չըջագգեստ,  
ինչպէս կը հագնին ձեր բարեկամներ-

ընէ շատը. գուցէ անիկա  
օտարական է, և չունի բա-  
րեկամներ, և ընկերներէ  
զուրկ կը թողուի վագանձի  
ատեն, երբ դուք ամէնդ-  
լաւ ժամանակ կ'անցնէք.  
գուցէ մէկը անոր անգը-  
թութիւն կը ցուցնէ և կը  
ծաղրէ անոր պարզ հան-  
դերձները և նեղութիւն  
կու տայ անոր: Արդ, ըսինք  
թէ դուք փորձ մը պիտի  
կատարէք. Գիտէք թէ ի՞նչ  
պէս պիտի զգայիք եթէ  
անոր տեղ ըլլայիք. ուրեմն  
կտոր մը աղ դրէք, այս-  
ինքն քանի մը քաղցր խօս-  
քեր, որոնք անոր զգալ  
պիտի տան թէ ինք գէթ  
մէկ բարեկամ ունի: Հրա-  
ւիրեցէք զանիկա որ ձեզի  
միանայ ձեր խաղերուն մէջ,  
և աշխատեցէք որ միւս  
աղջիկներն ալ սէր ցուցնեն  
անոր: Վստահ եմ թէ  
փորձը պիտի յաջողի, և թէ  
արդիւնքը այնպէս զարմա-  
նալի պիտի ըլլայ ինչպէս  
եղաւ վերոյիշեալ ըմպելիին  
խնդրին մէջ: Այն ատեն  
գէթ սա հաճոյքը կ'ունեն-  
նաք թէ Ոսկեղէն կանոնին  
կը հետևիք:

Իսկ գալով ձեզի, տղաք, վստահ  
եմ թէ շատ առիթներ ունիք փորձեր  
կատարելու: Դիցուք թէ ձեր կարգին  
մէջ կայ աշակերտ մը որ ալճէպրայի  
մէջ դժուարութեան մը կը հանդիպի.  
Սհա ձեզի փորձի պատեհութիւն մը.  
Օր մը երբ կը տեսնէք որ վագանձի  
ատեն այդ տղան նստեր կ'աշխատի  
խնդիրներու վրայ որոնց ոչ գլուխը և  
ոչ պոչը կրնայ գտնել, բայց զորոնք  
լաւ սորված էք դուք, հոն կտոր մը  
աղ դրէք: Քովը դացէք և օգնեցէք  
անոր: Շատ երկար չտևեր նորէն զա-  
նիկա ուղիղ ճամբուն վրայ բերելը:  
Բայց տարակոյս չունիմ թէ դուք ա-

ւելի գոհունակութիւն պիտի զգաք  
ձեր փորձին համար, եթէ մինչև ան-  
գամ ձեր առտուան կէսը տաք անոր:  
Հիմա ձեզի ըսի գաղտնիք մը, որով  
զարմանալի բան մը կարելի է ընել:  
Ուրեմն ձեր աչքերը չորս բրէք պա-  
տեհութիւններ գտնելու համար, և  
երբ կը տեսնէք լաւ առիթ մը, նե-  
տեցէք անոր մէջ կտոր մը աղ:

---o---  
ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐՑԻՆՍԻ ՄԱՅՐԸ  
Միացեալ Նահանգաց մէջ իրենց



վարժապետին, և անգամ մը ըսաւ  
թէ, եթէ նստիմ միւսնոյն կոճղին  
վրայ Մարք Հափքինսի հետ և խօ-  
սակցիմ անոր հետ, ուրիշ կըթու-  
թեան համար հոգ պիտի չընեմ:

Բայց կար ուրիշ մէկը, որու հան-  
դէպ աւելի մեծ երախտագիտութիւն  
զգալու էր Նախագահ Կարֆիլտ, այն  
էր իր մայրը: Մայրը որբւարի մնաց  
չորս փոքրիկ զաւակներով երբ ձէյմս  
չորս տարեկան էր միայն: Պատկերը  
կը ցուցնէ այս տիկնոջ կեանքին մէջ  
միջադէպ մը: Ան կ'ուզէր  
ցանկ մը քաշել իր արտին  
մէկ մասին բոլորտիքը. և  
անոր դրացիներէն ոմանք,  
խորհելով թէ անիկա որ-  
բւարի է, առաջարկեցին  
օգնել անոր: Երբ գործը  
մասամբ կատարուած էր,  
մարդիկը օղի խնդրեցին, և  
որովհետև տիկինը ոգելից  
ըմպելիներէ բոլորովին հրա-  
ժարող մըն էր, մերժեց  
տալ: Ուստի անոնք բար-  
կութեամբ թողուցին գոր-  
ծը կիսկատար վիճակի մէջ  
և մեկնեցան: Բայց հաս-  
տատամիտ կինը անձամբ  
ինք ձեռք առաւ թակը  
(թողմագ) և սեպը (գա-  
մա) և լմնուց ցանկը:


---o---  
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԸ  
ԱՄԲԱՐԱՆՈՅԻՆ ՄԷՋ  
Սուրբն Պողոս յիշեցուց  
Տիմոթէոսի թէ «Աստու-  
ծոյ խօսքը կապուած չէ»:  
Աստուծոյ խօսքը մէկէ ա-  
ւելի անգամներ հասած է  
կուսպաչափ մը և օրհնու-  
թիւն եղած է առանց մի-  
սիոնարներու օգնութեան:  
Քանի մը տարի առաջ  
տոգէտ բայց հլու ճափոնցի մը իբրև խո-  
հարար կը ծառայէր Ամերիկացի ընտա-  
նիքի մը մէջ ի Սան Ֆրանսիսքո: Պա-  
րապ ժամանակները իր սիրելի զաւ-  
ղումն էր ամբարանոց մտնել ուր հին  
գիրքեր կային, որոնք հոն նետուած  
գիրքուած էին տան այս այն խորշերէն:  
Անգլիերէն սորվելու կ'աշխատէր այս  
ճափոնցին, և գիրքերը կը գրգռէին իր  
հետաքրքրութիւնը և ժամերով կը  
զբաղեցնէին զանիկա բառերը սորվե-  
լու համար: Ճափոնցիին մէկ հայրե-  
նակիցը կ'այցեցէր անոր ամբարանոցի  
գրատան մէջ, և անոր չափ հետա-  
քրքիր եղաւ շատով: Ոսկեղոծ գիրք

մբ գրաւեց այս բարեկամին ուշադրութիւնը: Բացաւ զանկէա, և անոնք, իրենց ունեցած քիչկ մը հմտութեամբ, հեգեցին «Աստուածաշունչ Գիրք» աւանդը, և ըսին զարմանքով թէ ի՞նչ կը նշանակէ այն: Միտարան որոշեցին քննել, և ձեռք բերելով Անգղիերէն-ձափոններէն բառարան մը, խոհարարը և անոր բարեկամը մէկտեղ կու գային երբ և կրնային, և ուշադրութեամբ կը տնկէին իրենց աչքերը Սուրբ Գիրքին երեսներուն վրայ, շատ անգամ լամբարի աղօտ լոյսով՝ գիշերը մինչև ուշ ատեն: Իրիկուն մը որիչ ձափոնցի մը, որ քաղաքին մէջ միտինարական դպրոցի մը ուսանողներէն էր և ֆրիստոնեայ, անոնց այցելութիւն մը ըրաւ: Չարմացաւ երբ տեսաւ անոնց Աստուածաշունչ կարդալը, և ուրախութեամբ թարգմանեց անոնց քանի մը նշանաւոր գլուխներ և համարներ, և խոստացաւ թէ այնուհետև անոնց պիտի օգնէ գիրքը հասկնալու: Այն առթիւ ըրաւ անոնց ֆրիստոնի կեանքին պատմութիւնը: Խոհարարը և երիտասարդ ուսանողը իրենց ազգակից որիչ անձեր ալ համոզեցին Աստուածաշունչն ուսմանը,

ուսմանը, որ բժշկութիւն ընելու համար միայն անոնց կու տայ արտօնութիւն, որոնք պատշաճ կրթութիւն և հմտութիւն ստացած են և կարող են գոհացուցիչ քննութիւն մը անցնել, և ուստի երկիրը նախորդ ունէ ժամանակէ աւելի ունի կարող բժշկներ: Բայց տակաւին մեծ պակաս մը կայ կրթութեամբ հիւանդապահներու որոնք օգնելու են բժիշկներուն: Երանր ունէ հիւանդութեան ատեն հիւանդին բժշկուելուն յոյսը շատ կ'աւելնայ եթէ կանչուի այսպիսի հիւանդապահ մը որ խնամով ի գործ դնէ բժիշկին բոլոր հրահանգները, և որ գիտնայ թէ ճիշդ ի՞նչպէս հօգ տանելու է հիւանդին:

Ընդհանրապէս իզական սեռը ամենայարմար է այս գործին համար,

կեանքեր: Անոր նկատմամբ զինուորները կը զգային այնպիսի սէր, զոր բուն իրենց մայրերուն նկատմամբ կը զգային: Ասոր նման էր խրիմու պատերազմին ժամանակ նաև Անգղիացի զինուորներուն զգացումը հանդէպ Յլորէնս Նայթինկըյի: Ասոր հասնելէն առաջ վիրաւորներուն առ հարիւր 60ը կը մեռնէին պատշաճ խնամ չտարուելուն համար: Այս պատկերը կը ներկայացնէ զանկէա իւսկիւտարի հիւանդանոցին մէջ:



ԱՆՈՆՑ ՄԵԾԱԳՈՅՆ ՍԽԱՆՆԵՐԸ  
Շիքակոյի ֆրիվըր Մատենադարանին մէջ գիրք մը կայ, որուն մէջ հինգ հարիւր մարդիկ, որոնք անգործ մնացած էին, արձանագրած են ինչ որ իրենց կեանքին մէջ գործած ամէնէն մեծ սխալները կը համարին: Արձանագրուածներէն մէկ քանին հոս կը դընենք, որպէս զի ուրիշներ զգուշանան անոնց սխալները գործելէ:


1. Շահած ստակէս իննայութիւն չըրի:
2. Տղայութեան ժամանակ չհակըցայ դաստիարակութեան արժէքը:
3. Եթէ ստակիս աւելի աղէկ հոգ տանէի, աւելի աշէկ պիտի ըլլայի ա-



վերնայարկի սենեակ մը վարձեցին և կաղմակերպեցին աւետարանի ընկերութիւն մը: Ասոր արդիւնքն եղաւ ձափոնի երիցական եկեղեցւոյն կազմութիւնը 1885 Մայիսին: Սան Ֆրանսիսքոյի մէջ ֆրիստոնեայ ձափոնցիները երիտասարդաց ֆրիստոնեական ընկերակցութեան պատկանեալ մեծ շէնք մը ունին հիմա, և կը պահեն արտասահմանի առաքելութիւն մը: Ժամանակ ժամանակ սոյն եկեղեցիին կցուած այն երեք հարիւրէն մէկ քանիները իրենց հայրենիքը վերագործած են, և իրենց հետ տարած են իրենց ֆրիստոնեայ նկարագիրը և վկայութիւնը: Անոնց մէկն է խոհարարին բարեկամը, այն մարդը որ Աստուածաշունչը գտաւ ամբարանոցին մէջ:

և անոնցմէ հազարաւորներ իրենց կեանքերը նուիրած են բարիք ընելու այս կերպին: Հիւանդապահութիւնը այնպիսի պաշտօն մըն է որ կը պահանջէ զօրաւոր առողջութիւն, վասն զի միայն զօրաւորներն են որ կրնան դիմանալ անքուն գիշերներուն և հիւանդապահէ մը յաճախ պահանջուած հոգածութեան և պատասխանատուութեան: Անոնց վարձատրութիւնը կը կայանայ ոչ այնքան իրենց ընդունած դրամական վարձքին մէջ, որքան հանդէպ իրենց զգացուած երախտագիտութեան մէջ, և իրենց սագիտակցութեան մէջ թէ կեանքեր փրկած են: Ամբրիկեան քաղաքային պատերազմին մէջ կը գտնուէր «Մայր Պիքըրտայք» անունով հիւանդապահ մը, որ անխնայ և անձնուիրաբար ծառայեց «իր զաւակներուն», ինչպէս կ'անուանէր հիւանդ և վիրաւոր զինուորները, և որ ազատեց հարիւրաւոր

4. Չհակցայ թէ ի՞նչ կարևոր է միայն մէկ տեսակ գործի պարապել բոլոր ուժովս:
5. Կեանքիս մէջ ամէնէն մեծ սխալս եղաւ երբ ոգեկից ըմպելիի առաջին բաժակս առի:
6. Կեանքիս ամէնէն մեծ սխալներէն մին սա էր որ ինքզինքս կատարեալ չըրի այն գործին մէջ զոր սկսայ սորվիլ:
7. Կեանքիս մէջ բաղդս փոխող դէպքը եղաւ տնէն փախչելս երբ տասնըհինգ տարեկան էի:
8. Յիմարաբար վատնեցի ստակս երբ աղուոր վարձք կ'ընդունէի:
9. Ինքնահաւան էի և ծնողքիս խօսքերուն ակամջ չէի կախեր:
10. Ժամանակս պարապ անցուցի երբ դպրոց կը գտնուէի:



ՓԻՄԱՐԻՐ ՓԻՂԸ  
Սպանիական ցլամարտութեան հան-

ԿՐԹՈՒԱԾ ՀԻՒԱՆԴԱՊԱՀՆԵՐ  
Շնորհակալութիւններ այն հոգածութեան համար կայսերական կա-

դիստես եղողները չեն ժողովուրդ մարդավայել զգացումներ ցուցադրելու համար. քիչ անգամ կ'ունենան այսպիսի զգացում: Եւ սակայն Մատթիտէ եկած պատմութենէ մը կ'իմացուի թէ գէթ մէկ առթիւ կենդանիի մը ցուցած մեծահոգիութիւնը և մարդավայել ընթացքը գովուեցան, թէ պէտ այսպիսի ընթացքներ այնքան հաճելի պիտի չըլլային հանդիսականներուն և պիտի չքաջալերուէին աւանդակէ, եթէ ասպարէզին մէջ ցուցուէին մարդոցմէ:

Փիծարրօ, քաջածանօթ և շատ սիրելի փիղ մը, օր մը բերուեցաւ ցուելուն հետ կուռերու համար: Իր ետևի սրունքներէն մէկը ասպարէզին կեդրոնը կանգնած զօրաւոր ցիցի մը կապուեցաւ գետնէն իր մէկ ոտք վեր: Եւ փիղին վրայ սքանչացողները անոր շատ նարինջներ կը նետէին, զորոնք կը բռնէր և կ'ուտէր մեծ ախորժով: Յանկարծ կատաղի ցուլ մը արձակուեցաւ: Յուրը յառաջ վազեց և բառաչելով ասպարէզ հրաւիրեց միցակիցները և կատաղաբար փիծարրոյի վրայ յարձակեցաւ: Փիծարրօ մէկ կողմ հրեց զանկա իր ժանիքներով առանց բարկանալու, և շարունակեց ուտել իր նարինջները: Յուրը ցատկաբար անոր շուրջը, փորձելով անոր վրայ յարձակել փորին կողմէն: Փիծարրօ կը շարունակէր վայելել իր ազանգերը (չէրէզ) և նոյն ատեն զգուշութեամբ երեսը շոր կողմը կը դարձնէր մինչ ցուլը կը դառնար իր բուրտիքը, միշտ ճակատը անոր ցուցնելով: Հանդիսատեսները սաստիկ ծափահարեցին ուշիմ փիղը և աւելի շատ նարինջներ տեղացին անոր վրայ, վերջապէս ցուլը ետ քաշուեցաւ այս ասպարէզին աշխատութենէն: Յուլ ցուլի ետևէ արձակուեցաւ փիծարրոյի վրայ, բայց զանոնք ամէն ալ մէկիկ մէկիկ մէկ կողմ հրեց ան, և աշխուժիւ շարունակեց ժողովել իրեն նետուած նարինջները: Ամէնէն ետքը ներս վազեց ցուլ մը, որ կը թուէր թէ իրօք բան մը պիտի ընէր: Փիծարրօ լաւ հասկցաւ ատիկա: Յանկարծ դադարեցաւ ուտելէ և ճարտարութեամբ օրեց իր կապուած սրունքը այս կողմը և այն կողմը, մինչև որ քակեց չուանին մէկ մասը, որ կարծ մը փաթթուած էր ցիցին: Այնուհետև և յառաջ գնաց մինչև չուանին ամբողջ երկայնութեամբ հեռու ցիցէն, և պատրաստուեցաւ իր թշնամիին դէմ: Կատաղի ցուլը յարձակեցաւ,

բայց փիծարրօ արագ մը մէկ կողմ քաշեց ցուլը, բռնեց կուշտէն և զանկա իր ժանիքներուն վրայ վերցնելով, այնպէս թողուց անվաս, իբր թէ արհամարհելով իր հակառակորդին այդպիսի շնչին ջանքերը: Յուրը բառաչեց, և կից կ'արձակէր օդին մէջ, բան մը ընելու անկարող, մինչև որ փիծարրօ զանկա դետինը դբաւ և մեղմութեամբ մէկ կողմ հրեց, գոհ իր անարիւն յողթութենէն: Այն ատեն վերջացաւ ցուցահանդէսը և փիղը նորէն իր բնակարանը տարուեցաւ առաջուրնէ աւելի սիրելի:

ԱՂՂՈՒ ՊԱՏԻԺ

Ճափոնի մէջ բնիկ ճանապարհորդ մը երկու կրիայ գնեց, և վախնալով որ ծանր սուրբ պիտի առնուի իրմէ, զանոնք երկաթուղիով տեղէ տեղ փոխադրելուն համար իբրև ողջ կենդանիներ, փոքր սնտուկի մը մէջ դբաւ կրիաները: Ճափոնի Ռէյն Մէյլ լրադիրը հետեւաբար կը պատմէ այդ մարդուն և կրիաներուն վրայով: Երբ կառախուսը մտաւ մարդը, այնպէս զգուշութեամբ բռնած էր սնտուկը իր բազուկին ներքև, որ բազումութեան մէջ գտնուող գող մը տարակոյս չունեցաւ թէ մարդը թանկագին բան մը դրած էր սնտուկին մէջ: Ուստի միևնոյն կառքը մտաւ, և մարդուն քովի նստարանին վրայ նստաւ: Առաջին պատեհութեամբ սնտուկին մէկ կողմը պզտիկ ծակ մը բացաւ սուր զանակով մը և ձեռքը ներս խոթեց: Այդ ատեն կրիաները հասկցան թէ բան մը տեղի կ'ունենար, և ակռաներով բռնեցին գողին մատերը սաստիկութեամբ: Գողը ակռաները սեղմելով աշխատեցաւ ձեռքը ետ քաշել, բայց չկրցաւ: Այն ատեն սկսաւ պոռալ, ոռնալ: Եւ սնտուկին տէրը բռնեց զանկա և ցուցուց կառախուսը մարդոցը, որոնք երբ յաջորդ կայարանը հասան, գողը ոստիկանութեան պաշտօնեաներուն յանձնեցին:

ՄՈՂԵՍՆԵՐ ՍԱՄՈԱՅԻ ՄԷՋ

Սամոայի մէջ բնակող անձ մը մողեսներու վրայ հետաքրքրաշարժ բաներ կը պատմէ: Ասոնք մանր արարածներ են իբր երկու մատնաչափ երկայն, սիրուն գոյնով բաց և մութ թուխ: Կրնան պատուհանի ապակիէն վեր մագլել այնքան դիւրաւ որքան ճանձերը որոնցմով կը կերակուին: Այս մողեսները, երբ ահաբեկին, կը փախչին լոյսի բոցին պէս, և շատ յան-

դուգն կերպով կը ցատկեն: Տեսած եմ անոնց ցատկելը քսան ոտք բարձրութենէ: Բայց երբ նեղը մնան, պատրաստ են իրենց պոչերը փրցնել և փախչիլ: Իմ փոքրիկ կատուիս շատ հաճելի էր այդ մողեսներուն հետ իյնալ: Մողեսի մը երևոյթը կուռի անմիջական հրաւեր մըն է այս կատուի ձագին: Անիկա անմիջապէս որսի կը սկսի, ընդհանրապէս ապարդիւն աշխատութիւն: Վասն զի փոքրիկ մողեսը կատուին կրկնապատիկ արագութիւնով կը վազէ: Եւ սակայն երբ կատուի ձագը կը յաջողի մողեսին հասնիլ, չիղթ տեսարան մը կը ներկայանայ: Մողեսը անայլալակ կերպով կը փրցնէ իր պոչը, որ հոն կը մնայ շարժելով և խաղալով, մինչ մողեսը կը փախչի քիչ մը հեռուն և կը սպասէ թէ ինչ պիտի պատահի: Կատուի ձագը բնաւ չգիտեր թէ մողէսը բռնելու է թէ պոչը անոր կը վազէ, բայց միշտ մօտ կը կենայ շարժող պոչին և աչքը անկէ չզատեր: Հազիւ թէ անիկա կը դառնայ պոչին երթալու, մողեսը կը փախչի և կատուն զանկա կը փնտռէ: Հարիւրաւոր անգամներ դիտած եմ այս տեսարանը և վախճանը միշտ նոյնն եղած է, այսինքն մողեսը փախած է և կատուի ձագը ստիպուած է գոհ ըլլալ ոսկրուտ պոչովը: Բայց տանա մէջ և շուրջը խուսբերով մողեսներ կային որոնց պոչերը նորէն բուսած էին:

ՎԵՐ ՆԱՅԷ ՈՒ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՄԱԳԱՅԼ

Փոքրիկ տղայ մը սկսաւ վեր ելլել շատ բարձր սանդուղէ մը որ լաստակի (խկէլէ) մը կը հասնէր, որուն վրայ քանի մը մարդիկ կը գործէին: Երբ գրեթէ սանդուղին գազաթը հասած էր, դարձաւ և վար նայեցաւ: Տեսնելով գետնէն մեծ հեռաւորութիւնը, սկսաւ դեղնիլ և գուցէ վար պիտի իյնար, եթէ լաստակին վրայ գլուխուրդ մարդ մը չտեսնէր և չպոռապ անոր բարեկամական շեշտով մը, «Վեր նայէ, Օնիկ, վեր նայէ և շարունակէ մագլել»: Երբ կը տկարանանք և դըլխու պտոյտ կ'ունենանք, և նորէն հին, մեղանչական ճամբաներու մէջ իյնալու վտանգը կայ, մեզի նշանաբան ընենք, «Վեր նայէ ու շարունակէ մագլել»:

Տարեկան բաժանորդագին՝ 6 դա՛. արծաթ, կանխիկ, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Միտիմարայ Ընկերութեան կողմէն Արտոնատէր ձ. Բ. ԿՐԻՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՏ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՒՆ ԳՈՅԱՅԻՆ  
Ճինճանճըր Եօզուշու, Ամերիկան Խան